

Բ. Ա. Ս. Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Տ Ր Ա Մ Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Ե Ւ Ն

Զ Ա Ր Ե Հ , Շ Ա Հ Ա Պ , Կ Ո Ր Ւ Տ Ն

Հետևեալ Տրամախօսութիւնը մեր բարեկամաց մին զրկած է մեզ՝ ի հրատարակութիւն։ Հեղինակին նպատակն եղած է յանդիմանել այն հպարտ և անարդար որտերը, որը նեքնադատութեան օրէնքէն խուսելով միմիայն զայլու կը դատապարտեն։ Երբէք չեն ուղեր զգալ թէ իրենց գէմ եղած զրկաները բուն իրենց պարտազանցութեան հետեւութիւնն է։ Վ'երեւի թէ՝ մեր բարեկամը այս մօտերս այսպիսեաց յաճախ պատահած պիտի լինի, որ գըրդուուած է զրել։ Ինքնամոլութիւնը խիստ վնասակար ախտ մի է մորդկային ընկերութեան, մանաւանդ երբ այլոց օգուտը խարհելու պատրուակին տակ ծածկուած լինի այն։ Քանդի այն ատեն զինքը ծանչնալը դժուարին է։ Բընսամալ յամառեալ կը լինի, ուստի եթէ մեր բարեկամը իւր տրամախօսութեան մէջ զան նք շուտով զիջուցանել առեւեր է, յատկութիւննին չենանչնալէն չէ, այլ կ'երեւի որ թէ տարապարտ խօսքն երկարել չէ կսմեցեր, և թէ ոչ այնչափ կամեցեր է նուցա որպիսութիւնը նկարագրել, որչափ փափաքեր է ցոյց տալ՝ թէ ինչպէս պարտաւոր են լինիլ, այս պատճառաւ զայրցթէ զիջման անցնելու ատեն քիչ մի անցորդմարութիւն և թուլութիւն կը նշմարուի, զոր և ինքնին կը խոստու վանի սակայն իւր անդաման, լուսաւորութեան և յառաջացման, խօսեցայ անխնայ, լցու և զիտութիւն քարազեցի եռանդով, գիտութիւններ ստիլեցուցի աննախանձ սիրով, անտանելի աշխատանք կրելով հոգիս բերանս եկաւ, այս հասակամէջ մաղերս ձերմկեցան, բայց ազգը վիս ըստ ճաննցաւ, հոգ չէ, վիս ըստ վարձապես անապահ, անտանելի աշխատանք կրելով հոգիս բերանս եկաւ, այս հասակամէջ այդպես առաջանալու մասին պատճեն կը ցաւիմ ու գմբաղդութեան վերայ, որ իմ ջանքե-

նաղումը կ'ասեմք, և իրաւամք, բանպին թէպէտ սյս խօսալցութեանց գերասանքն երեք են միայն, բայց ո՞չ ապաքէն աշխարհի աեսարանն մէջ խիստ բազմաթիւ են զայն ներկայացնողը ընթերցողը թող դատէ։

Զարդեն թող զիս բարեկամ։ ամեն կողմէն վշտացած ու ամեն բանէ ձանձրացած եմ, ազգէս, բարեկամներէս, գործերէս և բուն իսկ անձէս, իմ կը բարս անտանելի է, չդիտեմ ինչ սեւ սատանայ մի շարսւնակ ոտքերուս կը պլուի, բայլերս կ'արդիէ և զիս կը խայտառակէ, ազգիս համար ինչ որ բըռնեցի ձեռքս մնաց։ Չգիտեմ, ինչ զարմանալի անզգայութիւն է այս, որ կը տիրէ մեր ազգին վերայ, գործես անսմափելի քնափութիւն, զրսմ մեռելութիւն մի ծանրացած է իւր հոգեկան կարողութեանց վերայ և զանոնք անընդունակ կ'ընէ ամեն բարեմասնութեանց, այսքան գոտում գոչումէն կոկորդս պատռեցաւ, շունչս հատաւ, իսկ նա զեռ անզգայ, անշորժ և անխիստ իւր ինկած կը մնայ տգիտութեան մէջ։ Իմ կենացս գեղեցիկ օրերը, իմ հարստութիւնս, պատիւս, վերջապէս ամեն բան զոհեցի իրեն համար, իւր զարգացման, լուսաւորութեան և յառաջապիմութեան համար բան վիրնայեցի, խօսեցայ անխնայ, լցու և զիտութիւն քարազեցի եռանդով, գիտութիւններ ստիլեցուցի աննախանձ սիրով, անտանելի աշխատանք կրելով հոգիս բերանս եկաւ, այս հասակամէջ մաղերս ձերմկեցան, բայց ազգը վիս ըստ ճաննցաւ, հոգ չէ, վիս ըստ վարձապես անապահ, անտանելի աշխատանք կրելով հոգիս բերանս եկաւ, այս հասակամէջ ատնցմէ աւելի կը ցաւիմ ու գմբաղդութեան վերայ, որ իմ ջանքե-

րըս ունայն եղան, ազգը օգուտ չունեցաւ, ինչ որ է՝ նցյան է : Մի բարեկամ գիտէք սիրտս որչափ կը հատնի, ան զգայութիւնը՝ անգործութիւն է, ան գործութիւնը՝ փառութիւն, փառութիւնը՝ սպառումն, սպառումը՝ յուսահատեցուցիչ, ես ալ յուսահատած եմ :

Հակառ. — Եկեցի լեզու, կեցցէ արամաբանութիւն :

Զարէն .— Ա ամսնվի այս ազգը անզգայ և անգործ է, հետեւաբար փառութեան և սպառման կը գիմէ, իւր շաւիով կորատական է . բայց կը ցաւիմ, որ իմ մտերիմ բարեկամներս ալ ինձ օգնելու տեղջդիտեմ ինչ պատճառաւ, զիս կը թողուն և օգնութիւննին կը զանան, ասոր համար գործերս ալ երեսի վրայ կը մնան, շահերս կը պակսին, ես ալ կը մնիմ աստանդական, այսու ամենայնիւ որչափ կ'ըսեմ, որ այսպիսի գործոց չխառնուիմ, անհնարին կ'ըսայ . կարծես բնական իմն բերմամբ կը մզուիմ, այս առթիւ անձէս ալ դժգոհ եմ, և դուք որչափ լոււ միջոցի պատահեցաք . այս լոտիս մարդու մը կարօտ էի, որ քիչմը խօսակցելով մտատանջութիւնս փարատէի . ըսէք նայիմ ասանկ վիճակի մը մարդ կը դիմանայ :

Հակառ. — Իրաւ է ձեր անխոնջ և անիշտառ աշխատութիւնը անուբանալի է, ձեր պաշտօնը ծանր է, դուք մը ուղերու հետ կը կառուիք, և զէնք ունիք ձեղ դիւրադարձ լեզու, երագ խորհրդաբանութիւն, սրանցելի ձարպիկութիւն և բազմադիմի հանձար, հանձար մի, որ ծովու պէս խոր, հեղեղի պէս յորդ, մթնոլորտի պէս անհուն, արեգակի պէս պայծառ, աւազի պէս անսպառ . դուք ամեն օր անհանդիստ էք, միշտ անխօնայ ձեր գիտութիւնը կը ծառալէք, կը սփուէք կը տարածէք ամենուն վրայ ձմրան ձիւնի պէս, բայց

ապաշնօրհ մարդիկ կը մերմեն կը հալածեն զայն հրաշունչ հովի պէս : Չափազանցութիւն ըրտած չեմ ըրտած՝ թէ որ զձեղը նութիւնն հրաշալիքը անուանեմ մանաւանդ պակաս ալ ըսած կ'ըլլամ : Դուք ձմարիս ազգասէք մ'էք, որ ձեր զգայուն սրտին մէջ վառուած սիրոյ բոցերով կը ձենձերիք և կը ձըդնիք ազգը անոր չերմութեամբն ոգեւորել, և պայծառ նշոյներովը լուսաւորել . բայց սրտանց կը ցաւիմ որ աղդը անզգայ է քու ճգանցդ գէմ, քու արժանիքդ չի ճանճար, ողորմելի ենք այս մասին, որ աղդն իրեն օգտան աշխատողներուն հետ գատապարտելի անհունութեամբ կը վարուի, որուն վախճանը վհատութիւն և բրումն է :

Զարէն .— Երդէն բուն ցաւալի կէտն այդ է, միթէ մենք մարդ չենք, օրմ' ալ վհատութիւնը մեր վրայ տիրածին պէս՝ վայն եկեր է ազգին գլխուն . . .

Հակառ. — Ճշգիտեմ, որ եթէ ազգին նպաստող մէկը կայ, այն դուք էք. եթէ զայն իւր մութ ու մնջար ճանբուն մէջ լուսաւորող վարոս միկայ, այն դուք էք. եթէ ազգը մտաւոր ու բարոյական օգուտ կը սպասէ, պէտք է քեզմէ, և մի այն քեզմէ սպասէ. բայց և այնպէս դուք մի վհատիք, որ այսօր չի ճանճար, դուք յուսալու և միիթարուելու հազարաւոր առիթներ ունիք, քանզի օր մի անշուշտ սիրտի ճանճայ ազգը և զձեղ վարձատրէ . բայց ես ինչ ընեմ, եթէ յուս սահատիլ պէտք է, այդ իմ բամբին է, եթէ ողորմելի մի կայ, այն ես եմ, ես, որ ամեն կողմէն յոյս հատած, ձարակտրած ինչ ընելս ցիխաւմ :

Զարէն .— Եթէ անկեղծ սիրտդ չի ճանճայի, թերեւս ինձ համար ըսածներդ չափազանց գտնայի . բայց շնորհ հակալ կ'ըլլամ . քու աղնիւ գիտացումէդ, որ այդպէս արժանիք կը ճանճաս և գոնէ ճանճարվդ վիս կը վարձատ-

բես, այդ ալ միմիթարութիւն մ' է մարդուս. ուստի ուրախ եմ որ այս կերպով կը բաջալերուիմ այսօր յառաջ տանել գործս, սակայն կ'աղջաշեմ, ձեր վեցոն ի՞նչ է, ի՞նչ ունիք, որ այդքափ լը եալ կ'երեւիք, դիտեք, վիշտերն ի բարու. յայտնելով կը թեթեւնան, ըսէք, կ'աղջաշեմ, գուցէ օդտակար կլրնամը ըլլալ ձեզ:

Հակոբ. — Ի՞նչ պիտի ըլլայ, միմէ չեխաէք որ ես ալ աղջատեցութեան զոհ մի եմ. գուք դիտեք, որ ես թեւ պէտ ուսումն և զիտութիւն չունիմ. բայց իբրեւ մարդ՝ լնիեր եմ մարդկան, իբրեւ աղջ, անդամ եմ աղջին. քաղաքավարութիւն, պակաս չէ, լեզուա խօսութիւն, քանի մը լեզուով կը խօսիմ, թէպէտ ոչ գրական կերպիւ. արհեստաւոր կ'ըսես, երկու ամենաընալիք արհեստից տէք, այսու ամենայ նիւ ոչ պատիւ ունիմ և ոչ ապրուստ. ինձ նման մարդկային կենաց պիտօննի արհեստաւոր մը այսօր երեսի վրայ մնացեր, ամեն ճոխութենէ և հաճոյք ներէ զրկուեր, ամբողջ ընտանեօքս այսօրուան օրս թշուառութեան ահագնաբաց կոկորդին մօտ կեցած եմ, որ եթէ զօրաւոր շունչ մի եւս առնու՝ կորուսաս անշուշտ է: Հաղար տեղ փոխեցի, որ գուցէ կորուսած բաղդս նորին գտնամ, բայց ուր որ դացի բաղդէս հեռացայ, դուք ալ դիտեք Պ. Խորիւն, այնպէս չէ, լուէք կ'աղջ չեմ խեղճաւթիւնս վերջին աստիճան հասած չէ:

Կորին. — Ըստ լսւ դիտեմ, ինչ որ դիտեմ. բայց շարունակէ խօսքդ եւ լուսցուք, հիմայ գու խօսելու աւելի պէտք ունիս քան լալու:

Հակոբ. — Ոհ, ի՞նչ խօսիմ, աղջատեաց են Հայերը, որ զիս չեն դործածեր, օտարին բուռը կը լեցնեն իրենց հարստութիւնը և իրենց աղդայիննե-

րուն չեն նայիր. բայց ինչպէս որ կ'ըսեն թէ՝ Նայը վայ է, շատ իրաւ են, ինչու որ վայ է անշուշտ այն ազգին վախճանը երբ արհեստաւորները երեսի փառաց անօդնական կը թողու:

Զարեհ. — Ո՞ի լսեր բարեկամ, ազգ գը մի թշնամներ:

Կորին. — Ձմաղ որ խօսի ինչ որ կ'ուզէ, որպէս զի լսէ ինչ որ ըուզեր:

Հակոբ. — Ե՛, ի՞նչպէս ջանեմ, գիտես թէ ի՞նչ սեւ փորձանքներ բերին զրւխուս այն սեւ գլուխները. ինձ նման զրկեալ և նենգեալ մի չը խօսի, հասկանվէ պիտի խօսի:

Զարեհ. — Ի՞այց ներեցէք, դուք ընդհանուրը մասնաւորին հետ կը շփոթէք. դուք աղջի վրայ խօսած ատեննիդ բոլը ըրութին մասնաւոր կը գտնամ նախատակնիդ, բայց ինչ և իցէ, այդ տրամաբանութիւն ջրգիտնալուդ է յանցանքը. բայց թէ որ ես դիտեմ, քու վիճակդ լաւ էր, ինչ ատանկ եղար, չըլայ թէ բոլը ըրութին անծանօթ պատճառներ ունենաս :

Հակոբ. — Ո՞որ իմ տունս քակոզ քանդողն անոնք եղան, անոնք:

Զարեհ. — Եետաքըրբութիւնս կը շարժես. այդ մարդիկը ի՞նչ կրնային ընելքեղ, միմէ զքեզ կողապտեցին, չըլայ որ ամսականդ զեզիցին, կամ :

Հակոբ. — Ոչ, ոչ, ոչ, այդ մասին բնաւ ըսելիք չունիմ, ամեն ամսու կարմրուկ ոսկինները գրաբանս գնելով ես զիս ամիրայ մի կը կործէի, շխառկը խօսելու է:

Զարեհ. — Հապա անոնցմէ գյուհելու պատճառդ ի՞նչ է. իրաւ է որ ես ալ շատ համարում չունիմ կը լրաց վրայ, բայց կը խօսարովանիմ, որ չտիփազանց ինքնասիրութեամբ շատ անդամ՝ զուր տեղ զը դատած էմ, չըլայ որ դուն ալ աղդպիտի սիսալմունք մը ունենաս, այս ը-

սելով զանանք արդարացնել չեմուղեր, այլ թշուառութեանդ բուն պատճառը հետազոտել կ'ուղեմ. քանզի այդ կերպով շատ անգամ Ու պատճառ փախանձու տրամաբանական սխալի մէջ կ'իշնանք. հէ, ինչ կ'ըսէք Պ. Կորիւն, ինչու չէք խօսիր:

Կորիւն. — Երկու խօսողնն մէկ լող պէտք է, դուք խօսեցէք, ես կրտենանեմ, որ երկուքնիդ ալմեծ կարեւորութիւն ունիք խօսելու, սրտերնուուդ ծանրութիւնը պարսկելու թեթեւցնելու համար, ես ալ մատիկ կ'ընեմ, և եթէ հարկը պահանջէ, երկու խօսք ալ ես կ'ընեմ:

Շահապ. — Կարծեմ Պ. Կորիւն կղերաց վրայ խօսելնէս չախորժիր, բայց ինչ ընեմ որ սիրտս այրած է. մինչեւ անգամ անոնց մէջ երկու հատիկ ամենալաւ, ընտիր, և սրտակից բարեկամներ ունեի, այս մօտերս զանանք ալ մերժեցի սաստիկ նախատակոծ ընելով:

Կորիւն. — Ալ սիրալիս բարեկամ, ձեր խօսակցութիւնը տխորժ կամ անախորժ ընողն՝ այս ինչ կամ այն ինչ անձի վրայ ըլլալը չէ, այլ իրաւունքն ու անիրաւութիւնն է, և ես առաջադրած եմ չը խօսիլ, մինչեւ ձեր խօսքին վախճանն առնում, ասք թէ դիտցածս պիտի խօսիմ. բայց դու Պ. Օ արեհի հարցման պատասխանէ, և շարունակեցէք խօսակցութիւննիդ. — ըլլայ թէ սիրալած լինիք, ըսաւ Պ. Օ արեհ:

Շահապ. — Ու երբէք. շատ աղեկ գիտեմ, որ սիսալած չեմ, վասն վե նոքազիս համողեցին, տեղէս շարժեցին, ես ալ նոցա խօսամանց հաւտալով անտառնելիս տեղափոխեցայ հանդերձ ընտանեօք, տունով եւ կահկարասեօք, որչափ որ կեցայ այն տեղ. . . ամենայն աշալը թշութեամբ աշխատեցայ, և վերջը, չգիտեմ ինչ պատճառով ինձ ճամբ.

Բայց տուին. Եկայ վերստին այս տեղ, յաճախորդներս ալ ինձ չեն մօտենար, տեղէ տեղ կը փոխուիմ, բայց մէ կը վեցի հարցներ. ալ չեմ կրնար կազդուրութիւն, ես թափառական, ընտանիքս թշուառ, բարեկամներէս գլկուած, բարեկամուհեացս քով երես չունիմ, քանզի ալ իրենց նուիրելու բան չունիմ, ասկէց աւելի ինչ թշուառութիւն կրնայ ըլլալ. այն տեղ ունեցած երկու մոտերիմ բարեկամներուս ալգըրեցի, որ վիս նորէն հոն տանին, նորագրիս ալ չը պատասխանեցին, ես ալ սրտիս ցաւէն մերժողական անարդաբարնութեամբ լեցուննամակմի գրեցի և զիրենք մերժեցի, և հիմա կողսպատուած մարդու կամ պարսկուած տան մը պէս ունայն եղատարկ կը մնամառանց ինչ ըլլալ գիտնալու. արդ ըսէք նայիմ, Հայը վաց չէ. Հայերն ազգաւեաց չեն. այն բարեկամներս ալ եւ ընտանիա բարեկամ չեն, և միթէ սիսալած եմ դատողութեանս մէջ, ո՞վ ըլլայ որ դիմանայ իմ այս վիճակիս:

Զարէն. — Հիբրաւի, անտանելի է ձեր այժմեան վիճակը, կարելցութիւնս կը շարժէք, ես հիմա ձեր խօսքը չնպատի դատիմ, ձեր դատողութեան ուղիղ կոմսիսալ լինելը քննել ուրիշ խաղաղ ատենի կը թողում, եթէ սիսալ լինի, խակ հիմա ստիպողական հարկէն բըռնադատուած ձեղ օգտակար ըլլալը համար, կ'ուզեմ բարեկամութիւն մը ընել, յուսալով՝ որ կ'ընդունիք, անկեղալքար կը խրատեմ զենցու կը յորդորեմ, որ չի վհատիք, վհատութիւնն ու լքումը ամեն դուռ կը գոցէ. յուսերնիդ քնաւ մարդու վրայ մի դնէք, Աստուած և աշխատութիւն, բոլոր յաջողութեանց գաղտնիքը այս երկու սկզբանց մէջ է. ջանա զայն դուրս հանել, աշխատէ հաւատարմութեամբ, և գործերդ կարգադրէ խոհեմութիք,

ճախքերդ չափաւորէ , և չնչին յցյերով և հաճոյակատարութեամբ . . . ըրած նուիրատուութիւններդ գաղրեցուր , այն յիշած բարեկամուհիներէդ զրկուիլդ բարեբաղդութիւն սեպէ , և թէ որ կ'ուղես երջանկանալ զանոնք խաղառ մառցիր , տեղմը հաստատ կեցիր , հոգ չէ որ ժամանակ մը անգործ մնաս , այն անգործ մնացոծ ատենդ ընելիք ճախքերդ՝ տեղափոխելու համար ընելպարտաւորուած ունայն ճախուցդ սեպէ , և ժամանակ մի համբերէ , մինչեւ ծանօթ և յաճախորդ ունենաս . քիչով գոհ եղիր և սիրտդ զրւարթ պահէ , այն ատեն պիտի տեսնաս , որ օր աւուր ապրուստդ կարդի կը մտնայ , առ այժմ այսցափ . . . :

Ըսկապ. — Հնորհակալ եմ , բայց ես կարծեցի թէ իրք օգնութիւն մը պիտի ընես , չոր ու ցամաք խրատն ի՞նչ ընեմ , թէ որ իմ վիճակիս վրայ սրտանց կը ցտւիս և կարելցութեամբ բարիք մի ընել կ'ուղես , ազգասիրաբար հանէ քանի մը ոսկի շնորհը բրէ . եթէ բռլումին չես շնորհեր , գոնէ վտխ տուրու

Զարեհ. — Երեցէք Պ. քիչ մը յառաջ իմ վիճակս ալ ձեզ յայտնեցի , և ես ձեզմէ նալաստ պիտի խնդրէի , մանաւանդ պիտի առաջարկէի որ մեր ընկերութեան բաժանորդ լինիս . բայց տեսնելով , որ քու վիճակդ ալ խեղձէ , չի համարձակեցայ , դուք եւս կարող էիք իմանալ , որ իմ կողմէս այդ նալաստըն ընել անկարելի էր : Այս իմ հազար պիտոյըններս ունիմ զորս հոգալու համար անբաւ դրամի կը կարօտիմ , դրբամական խնդիրը դարուս մէջ խիստ ծանր խնդիր մ'է , եղային եղայրը տասը զուրուշ չի հաւատար , հետեւաբար այդ պահանջըդդ ալ ապօրինի է :

Ըսկապ. — Իմ գմբաղդութիւններուս մէկն ալ այսէ , որ միշտ սուտ բարեկամներու կը սղատահիմ , որք օդնեւ

լու տեղ պարապ խօսքեր կ'ընեն ինձ : Զարեհ. — Չեմ զարմանար ձեր ըստ ծին , վասն զի սքաղաղն ալ մարդարտին յարդը չի ճանշնար , թէ որ դու լու խորհիս , իմ խրատներս քեզ համար մշտնջենաւոր ծոխութիւններ են , եթէ նիւթական նպաստ մը ընէի , քանի մը ժամէն , կամ շատ շատ քանի մը օրէն պիտի սպառէր . բայց թէ որ իրաւաներուս հետեւիս՝ միշտ պիտի նրապաստաւորիս , և ուրիշ անդամալ թէ որ խորհուրդի կամ խրատի պէտք ու նենաս , կարող ես վատահութեամբ դիմել ինձ իբր քու անկեղծ բարեկամիդ :

Ըսկապ. — Խրատի կարօտ չեմ , դրամի կարօտ եմ . խրատս իմ ծոցսէ , թէ որ ուրիշ ըսելիք ունիս , այն ըսէ :

Զարեհ. — Ուրախ եմ , որ խրատնիդ ծռցերնիդէ . եթէ ձեր ծոցն եղած խրատը օգատակար խրատէ , աւահով եղիք , որ աշխարհի դրամն ալ ծոցերնիդէ , աշխատեցէք ուրեմն զանոնք գործադրել , յաջողութիւն կը մաղթեմ :

Կրին. — Կարծեմ թէ վերջապէս խօսքերնիդ լրացաւ :

Ըսկապ. — Այս , վերջացաւ , բայց խիստ ապարդիւն վախճան ունեցաւ :

Զարեհ. — Խօսելու կարգը ձեզ եւ կաւ , մենք ալ պատրաստ եմք մտիկ ընկելու :

Կրին. — Վիսէք անշաւշտ , որ ես ձեր անցեալ ու ներկայ վիճակին լու տեղեկութիւն ունիմ , և կը զարմանամ թէ ինքնամոլութիւնը որչափ կը խանգարէ մարդուս խմացականութիւնը և կը թիւրէ դատաղութիւնը , այնշափ , մինչեւ տեսնել չլաւար որ ձեր բուն արձէքը ճանցողն է ձեր ունկնդիրը , ատով կը ստիպէք զիս որ խօսիմ , այն պիտի խօսիմ առանց որ և իցէ նկատման , և պիտի խօսիմ անաշառութիւն , այս պատճառաւ կանխաւ ձեր հաճութիւնը կ'ուղիմ , խնդրելով միանդաւ

մայն, որ ոչ վլոգավիք և ոչ ալ ինձմէ վշտանաք, ըրածս ոչ հակառակութիւն է և ոչ թշնամութիւն, այլ պարզ խօսակցութիւն, և եթէ ըմբռնելու չափ իմաստութիւն ունիք, կարողէք գիտնալ թէ բրածս մեծ բարեկամութիւն է . խօսքերս կ'ուղեք ընդունեցէք կ'ուղեք մի ընդունիք, միայն թէ մեր բարեկամութեան թող չկապչի:

Զարթէ . - Իրաւացի փաստերու վրայ հիմնեցէք խօսքերնիդ և չենք զայրանար :

Ըստապ . - Արդարութեան դէմ զայրանալէն ի՞նչ օգուտ :

Կորին . - Եայց դժբաղդաբար այն պիսի դարի մը մէջ կ'ասպինք, որ Ճը մարտութիւնը ծանր կուգայ լսելեաց, և բազմաց զայրոյթ պատճառողը բուն իսկ արդարութիւնն ու Ճմարտութիւնն է, և ասոր համար է, որ ես կանխաւ կրզդուշացնեմ զձեղ, որդուք ալ չենանիք այն անմիտներուն, որ միշտ կ'ուղեն իրենց կամաց հաճացական եղածը եւ իրենց անձնասիրութիւնը չցող խօսքեր միայն լսեն և զայնո միայն իրաւունք, Ճմարտութիւն և արդարութիւն կը համարին, զօրս իրենց մտաց համաձայն կը գտնեն . այս պատճառաւ է ահա, որ անվերջանալի վիճաբանութիւնք, ոկրոյ և բարեկամութեան սառնութիւն, հակարութիւն, ատելութիւն, և ուրիշ շատ չարիքներ տեղի կ'ունենան, ես այդ կերպ խօսակցութիւնները կ'ատեմ, ինչու որ ապարդիւն ըլլուէ զատ վեասակար ալեն :

Զարթէ . - Հարկաւ այդպէս է, ինձալ ատելի են, ես միշտ Ճմարտութիւնը լսել կը սիրեմ, թէ և բուն իսկ ինձ դէմ եղած ըլլայ :

Ըստապ . - Ճմարտութիւնը ովլչութեր լսել :

Կորին . - Անքնամոները կ'ատեն Ճը մարտութիւնը, կամուպաշտները կը

հերքեն ու կը հալածեն զայն, խարեւքայ, կեղծաւոր և չարասիրաները կը ծածկեն զայն, և առհասարակ մոլիները կը հալածեն, բայց Ճմարտութիւնը միշտ անոնց ետեւէն կը չըջի զերենիք խայտառակելու համար :

Զարթէ . - Յիրաւի այդպիսեաց յատուկ է արդար ու Ճմարիտ խօսքերուդէմ զայրոյթ բանեցնել . բայց մենք սիրով պիտի լսենիք :

(Կարուհակութեան)

ԱՆՀԻՄՆ ՏՐՏՈՒԽՆԵՐ

Դրեթէ ագղասին ամեն կարգի և աստիճանի անհատներու համար առօրեայ առած մ' եղած է, թէ « Վզգին գործերը երեսի վրաց մնացած են, աղգին գործոց նայող և հւկող ըլկոյ : » Վաստեսակ խօսքեր բարձրագոյն կարգի սրտշտօնեայներէն, այսինքն ազգային երեսփառաններէն սկսեալ ցյետին անհատն ընդ միշտ կը յեղյեղն, և համարեալ թէ իւրաքանչիւրն ևս զանգան պատճառներ կը նշանակեն այս առթիւ, Ոմանիք կ'ըսեն՝ որ ազդին ընդ հանուր անտարբերութիւնն է ազգային գործոց յետ մնալուն պատճառ . ոմանիք՝ թէ եկեղեցականիք են, որք իւրենց պարտաւորութիւնքը ըլձանաշելով, կամ ձանաշելով և ՚ի գործ ըլդնելով, այս վիճակին հասուցած են . ոմանիք՝ թէ ազգին մէջ կրթութեան և գաստիարակութեան բարձի թողի լինին է միակ առիթ . իսկ ոմանիք՝ (մեծ մասը) թէ արդի Պատրիարքին անքաղաքագիտութիւնն և հակասահմանագրական ընթացքն է պատճառ ազգային գործոց յետամնացութեան . և վերջապէս շատերն ալ ուրիշ պատճառներ մէջ կը բերեն :